ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.12.2013թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-48/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-48/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Գնումների աջակցման կենտրոնի կողմից 23.12.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-48/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. <u>«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ անհայտ կազմակերպությունը 11.12.2013թ. ժամը 17:02-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցի կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերն ուղարկվել է 03.12.2013թ. ժամը 17:45-ին, իսկ հայտերի բացման նիստը կայացել է 11.12.2013թ., որի արդյունքում խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ խնդրելով չկայացած հայտարարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցը 13.12.2013թ. Կենտրոնին ներկայացրած N 00/141 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը կայացել է օրենքի սահմաններում և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի խախտում չի կատարվել:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշվված յոթ աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնման, որոնց դեպքում հայտը կարող է ներկայացվել ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցի կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստը կայացել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետի խախտումով:

Ելնելով վերոգրյալից՝ Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը:

2. <u>Դ. Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոցի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 12.12.2013թ. էլեկտրոնային նամակով դիմել է Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 11.12.2013թ. ժամը 17:02-ին ստացված ահազանգի վերաբերյալ:

Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցը 13.12.2013թ. N 00-141 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 11.12.2013թ. ժամը 17:02-ին ստացված

ահազանգի վերաբերյալ հայտնել է, որ Երևանի Դ. Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոցի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը կայացել է օրենքի սահմաններում և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի խախտում չի կատարվել, սակայն ի լրումն 13.12.2013թ. N 00-141 գրության 26.12.2013թ. N 00-195 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

3. ԳԲԽ-48/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքի պահանջը Պատվիրատուի կողմից ընդունվել և կատարվել է մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելն՝ առաջարկել է Գնումների բողոքարկման խորհրդին 23.12.2013թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

4. ԳԲԽ-48/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-48/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է 23.12.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (ծանուցումը), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 11.12.2013թ. ժամը 09:00-ին կայացած նիստի N 1 արձանագրությունը, Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 13.12.2013թ. N 00-141 և 26.12.2013թ. N 00-195 գրությունները, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցի կողմից էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Անհայտ կազմակերպությունը 11.12.2013թ. ժամը 17:02-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցի կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերն ուղարկվել է 03.12.2013թ. ժամը 17:45-ին, իսկ հայտերի բացման նիստը կայացել է 11.12.2013թ., որի արդյունքում խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ խնդրելով չկայացած հայտարարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

Կենտրոնը 12.12.2013թ. էլեկտրոնային նամակով դիմել է Դ. Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոցին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 11.12.2013թ. ժամը 17:02-ին ստացված ահազանգի վերաբերյալ:

Պատվիրատուն 13.12.2013թ. N 00-141 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 11.12.2013թ. ժամը 17:02-ին ստացված ահազանգի վերաբերյալ հայտնել է, որ Երևանի Դ. Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոցի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը կայացել է օրենքի սահմաններում և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի խախտում չի կատարվել:

Հանձնաժողովի 11.12.2013թ. ժամը 09:00-ին կայացած նիստի N 1 արձանագրությամբ կայացել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստը և արձանագրվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով գնային առաջարկներ են ներկայացրել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն և «Լիգա պլյուս» ՍՊԸ-ն:

Ահազանգող կազմակերպությունը Կենտրոնին է ներկայացրել «ayad88@mail.ru» էլեկտրոնային փոստից «aprang-11-12@shh.gnumner.am» էլեկտրոնային փոստին 03.12.2013թ. ժամը 17:45-ին ստացված էլեկտրոնային նամակը, որին կցված է եղել Պատվիրատուի կողմից Ընթացակարգի մասնակիցներին հասցեագրված 29.11.2013թ. N 00-193 հրավերը (ծանուցումը): Նշված հրավերով (ծանուցմամբ) սահմանվել է, որ հայտն անհրաժեշտ է ներկայացնել Երևանի Դանիել Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոց՝ Դավիթ Մելիքսեթյանին, ք. Երևան, Սեբաստիա 19 հասցեով, մինչև 2013 թվականի դեկտեմբերի 11-ը, ժամը 09:00-ն, ինչպես նաև նշվել է, որ հայտերը կբացվեն Երևանի

Դանիել Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոցի շենքում, ք. Երևան, Սեբաստիա 19 հասցեում:

Այսինքն, Պատվիրատուի կողմից 03.12.2013թ. ուղարկված էլեկտրոնային նամակին կից Ընթացակարգի մասնակիցներին հասցեագրված 29.11.2013թ. N 00-193 հրավերով (ծանուցմամբ) ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվա և հայտերի ներկայացման վերջնաժամկետի միջև ընկած ժամանակահատվածը կազմել է 5 աշխատանքային օր:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 137-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ, 23.12.2013թ. բողոքարկման գործընթաց է նախաձեռնել Գնումների բողոքարկման խորհրդում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 109-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշվված յոթ աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնման, որոնց դեպքում հայտը կարող է ներկայացվել ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Պատվիրատուի կողմից 03.12.2013թ. էլեկտրոնային նամակով ուղարկված Ընթացակարգի մասնակիցներին հասցեագրված 29.11.2013թ. N 00-193 հրավերի (ծանուցման) ուսումնասիրությունից պարզվել, որ խախտվել է Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի մասնակիցներին հասցեագրված 29.11.2013թ. N 00-193 հրավերով (ծանուցմամբ) հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշվված 5-րդ աշխատանքային օրը:

Պատվիրատուն 26.12.2013թ. N 00-195 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ թեև Դ. Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոցը Ընթացակարգի մասնակիցներին հասցեագրված 29.11.2013թ. N 00-193 հրավերով (ծանուցմամբ) ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվա և հայտերի ներկայացման վերջնաժամկետի միջև ընկած ժամանակահատվածը սահմանելով 5 աշխատանքային օր խախտել է Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, այնուամենայնիվ արձանագրված խախտումը Պատվիրատուի կողմից ընդունվել և օրենքով սահմանված կարգով վերացվել է:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կենտրոնի կողմից Գնումների բողոքարկման խորհրդին 23.12.2013թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամներ՝ Վիկտորյա Ղազարյան

Արմինե Նամալյան